## ՆԱԹԱՆ ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Շատ մատչելի գներով դասեր կուտայ դաշնակի, ջութակի վրայ ածելու նաեւ երգեցողութեան. Փափագողները կրնան դիմել իրեն. «Պալքանիքիյա» փողոց թիւ 8 կամ թէ «Շարժում»ի խմբագրութեան։

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պաքուցի Հարութ Յովսէփ Թումայեան յուլիս 26ին մեռեր է Պաքուի մէջ. ասոր որդին Ներասիմ, հազար ոսկի նուիրեր է Պարսկ. հնդկաստանի առաջնորդարանին տպարան մը գնելու համար.

— Տանօթ Թատերագիր Գաբրիէլ Սունդուկեանց 1418 րուպլի և 96 կոպէկ տոկոսաբեր գումար մը նուիրեր է հայոց դրամատիքական ընկերութեան. Այդ գումարը գոյացած է համակրելի գրագէտին «Ամուսիններ» անուն բիէսի ներկայացումէն, քանի մը տարիներ առաջ.

— Օգոստոսը լրանալու վրայ է բայց մեր վարժարաններու ուսուցիչները դեռ վարձուած չեն. Ի՞նչ կը մտածեն մեր հոգաբարձուները.

— Երուսաղէմի միաբանութիւնը կտրուկ որոշում մը տուեր է իր միաբանութեան շարքին մէջէն վերցնելով Պոլիս գտնուող Մարկոս վարդ. Գարագաշեանի անունը, նկատելով որ այդ վարդապետը իր Գասըմ—Փաշայի քարոզչութեան [միջոցին կարգ մը անվայել արարքներու տեղի տըւած է. Միաբանութիւնը Պոլսոյ Պատրիարքին գրած է թէ այլեւս այդ վարդապետը Երուսաղէմի միաբան չի ճանչնիր և հետեւաբար չի կրնար ընդունիլ վանքին մէջ.

— Վառնայի թաղապետութեան անդամ ընտրուեր է Տ. Յովակիմ Թովմասեան.

— Թաղապետութեան անդամներու հետ ընտրուած է նաեւ ազգային վարժարաններու հոգաբարձութիւնը. Կը յուսանք որ նոր հոգաբարձութիւնը պիտի աշխատի [ուսումնարանը շուտով կանոնաւոր վիճակի մէջ դնելու.

— Խմբագրութիւնս իր ցաւակցութիւնը կը յայտնէ թերթիս պատասխանատու պ. Մուրատ Երանոսեանի իր հօրեղբօրը մահուան առթիւ որ իրեն գործակից հայր մը եղած էր.

—

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱ

Գերմանական թերթի մը կը գրեն որ Պոլսոյ դրամատուները մեծ յուզումի մէջ են թրքական դրաքննիչի մէկ նոր կարգադրութեան պատճառով.

Դրամատուներուն պատուիրուած է իրենց գրքերու ճիշդ հաշիւը պահել և դնողներուն անունները նշանակել.

— «Էնֆորմասիոն» թերթին Հռոմէ կիմացնեն թէ Իտալիան տեսնելով որ չը պիտի կրնայ Թարապլուզը գրաւել որոշած է Բ. Դրան համաձայնեցնել տալ Թարապլուզը և Կիպրոսը 99ը տարիով վարձու տալ Իտալական կառավարութեան.

### ՌՈՒՍԻԱ

Ծովային նախարարը հրամայած է նաւերու շինութեան համար ռուսական նիւթեր գործածել.

— Վարշավայի մէջ դրամանենգերու մեծ խումբ մը գտնուեր է. Բազմաթիւ անձինք ձերբակալուած են.

### ՖՐԱՆՍԱ

Ֆրանսական դեսպանական մարմիններու մէջ փոփոխութիւն տեղի պիտի ունենայ.

Կըսուի թէ Պոլսոյ դեսպանն ալ պիտի փոխուի.

— Պաշտօնական վիճակագրութեան նայելով 57 նահանգային խորհուրդներ շնորհաւորական ուղերձներ ղրկած են կառավարութեան կրօնաւորներուն դպրոցները փակելուն առթիւ.

—

### ԱՆԳԼԻԱ

Կառավարութիւնը որոշած է Թրանսվալի բանակը 40,000 հոգիի սահմանափակել.

— Բարբէյուսոյ մէջ նոր խորհրդարանին ընտրութիւնները տեղի պիտի ունենան զինուորական օրէնքին վերցուելէն անմիջապէս ետքը.

### ԹՐԱՆՍՎԱԱԼ

Անգլիական թերթ մը կը հաստատէ որ զօրավար Պօթա Բրիւկէրի յայտարարած է որ ամեն մէկ Պօէրի պարտականութիւնը պիտի ըլլայ Անգլիոյ օրէնքները յարգել և Էտուարտ թագաւորի հաւատարիմ հպատակը ըլլալ. որովհետեւ ուրիշ քաղաքականութիւն մը Պօէրներու համար ֆնասակար պիտի ըլլայ.

## ԱՆՁՆԱՍՊԱՆՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն Ռընէ տը Բօն-Ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

**23րդ և 24րդ թերթերը**

հրատարակուեցան.

Գիրքը շաբաթը երկու թերթ կը հրատարակուի եւ իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի. Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ.

Վառնայի համար բաժնեգին 1 ֆր.: Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20.

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ եւ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը ղրկուին. փոսթի ծախքը հրատարակչին վրայ է. Դիմել հետեւեալ հասցէին՝ **Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.**

Դրամի փոխարէն նամականիշ ալ կ'ընդունուի.

### ՊԱՏՐԱՍՏ ՍՈՒՐՃԻ ԳՈՐԾԱՐԱՆ

«Ամազօն»

Բոչալավսքա փողոց Բրկեզեայ

Ապտիլլարանիման ճամբի դիմացը

Ստորագրեալս այսու կուգամ յայտարարել որ հաստատութեանս մէջ մեծ խնամքով և եւրոպական կատարելագործեալ մեքենաներով կը պատրաստուին ամեն ճաշակի յարմարող սուրճի տեսակներն, որք արուեստական անորակելի խարդախութիւններէ, ֆնասակար խառնուրդներէ, քրտինքէ և հակառողջական ազդեցութիւններէ զերծ ըլլալով հանդերձ խիստ դիւրամատչելի գներով կը վաճառուին.

Հաստատութեանս այցելողն տեսնելով իմ պատրաստութեան եղանակը և լսելով իմ տալիք բացատրութիւններն միանգամ ընդ միշտ պիտի համոզուի որ պատրաստածս սուրճերը կը հաւասարին իրենց յատկութիւններովն ամենէն նրբաճաշակ և խնամոտ ընտանեաց մէջ պատրաստուած սուրճերու մաքրութեան, ինչպէս նաեւ իմ գներու չափաւորութիւնը բաղդատութեան դնելով տուներու մէջ 1 կամ 1/2 քիլօ սուրճի պատրաստութեան համար վատնուած յոգնութեանց, ժամանակի կորուստի և ծախուց հետ ամեն ոք պիտի համոզուի որ հաստատութեանս գոյութիւնը իրական առաւելութիւն մ'է մաքրութեան խնայողութեան և հանգստութեան տեսակէտով.

Յ. Թօփալեանց

ԱՆՈՒՇԱՒԱՆ

## ՀԱՅԻ ՀԱՄԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ

Մամլոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ պանազան պատկերներ. հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար.

Բաժնեգինն է 1 ֆրանք. փօսթի ծախքը հրատարակչին վրայ.

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդներուն.

Գոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական կարմիր Խաչ»ի ընկերութեան.

Բաժանորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին.

Մուրատ Երանոսեան
(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»Ի

—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսենական հրաւիրագիր, մահազդ.

Գիները յոյժ դիւրամատչելի.

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին.

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻՆ

## L'EUROPEEN

Շաբաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական եւ գեղարուեստական.

Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Իւնիոն տէ Զ'էդիւդիան Արմ.
լ'Էօրոփ րիւ տը լ'Էքօլ տը Մէտսին 2
Սուիս Ժընէվ
Կարգադիր Յանձնաժողով.

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна.